



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yaralyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Գիտակցությունն օբյեկտիվ իրականության արտացոլման և շրջակա միջավայրի նկատմամբ մարդու վերաբերմունքի նպատակաուղղված կարգավորման բարձրագույն ձև է: Այն մարդկության զարգացման ընթացքում ձևավորված զգայական (սենսոր), ինտելեկտուալ, կամային և հուզական գործընթացների համակարգ է, որն ուղղված է մարդու կողմից շրջակա աշխարհի ճանաչմանը և վերափոխմանը՝ համաձայն իր պահանջներին: Այն մարդուն հնարավորություն է տալիս ճանաչելու ոչ միայն շրջակա աշխարհը, այլև ինքն իրեն, դառնալու գործունեության սուբյեկտ, անձնավորություն: Գիտակցության միջոցով անհատը տարբերում է «ես»-ը «ոչ ես»-ից, իրեն շրջապատող աշխարհից՝ հնարավորություն ընձեռելով ուսումնասիրելու սեփական անձն ու հոգեկան գործունեությունն ուղղել իր վրա» [1]:

Հոգևոր կյանքի բոլոր շրջաններում կառուցողական է հանդես գալիս գիտակցության համապատասխան տեսակը՝ ընդգծելով այդ շրջաններից յուրաքանչյուրի հարաբերական սահմանը: Կրոնական գիտակցությունը դիտարկվում է ոչ միայն կրոնի փիլիսոփայությունում, այլև սոցիոլոգիայում, հոգեբանությունում, ֆենոմենոլոգիայում, կրոնի պատմության մեջ: Կրոնի ստեղծմանը, որպես հոգևոր ինքնուրույն ոլորտի, նախորդել է դիցաբանական հավատամքների ստեղծման և ձևավորման երկարատև գործընթացը: Պատմականորեն աշխարհընկալման առաջին միջոցը դիցաբանական գիտակցությունն է:

Դիցաբանությունը ստեղծում է առասպելների փոխկապակցվածություն, իսկ առասպելն իրականի հոգևոր վերարտադրումն է ուղերձի կամ պատմվածքի տեսքով, որի իրադարձությունները և հերոսները օբյեկտիվորեն ճանաչվում են որպես գոյություն ունեցող: Դիցաբանությունը ստեղծվել է տարերայնորեն, համայնքատոհմային հասարակարգի պայմաններում, որպես կոլեկտիվ ստեղծագործության արդյունք՝ աշխարհն ընկալելով զգացմունքային կերպարների ձևով: Առասպելում միասին ներկայացված են ինտելեկտուալ, զգացմունքային և կամային վերաբերմունքն առ աշխարհ: Դիցաբանությունում բացակայում է «մարդու տարբերությունն արտաքին բնությունից» գիտակցումը, անհատական գիտակցությունն առանձնացված չէ խմբակայինից, չեն տարբերվում պատկերն ու առարկան, սուբյեկտիվն ու օբյեկտիվը, գիտակցականում կատարվողն ընդունվում է իրականում կատարվողի փոխարեն:

Նախնադարյան հասարակության չանդամահատված կոլեկտիվիզմը դրվում է բնության վրա, բնության հատկությունները և կապերը ձևավորվում են գործող անձերի համանմանությամբ, դերերով և տոհմային հասարակարգերի հարաբերությամբ:

յուներով և, հակառակը, մարդ-տոհմային կապերն ի հայտ են գալիս նատուրոմորֆ տեսակով: Դիցաբանության ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել ֆետիշիզմը, տոտեմիզմը, կախարդանքը և անիմիզմը: Սկզբնական շրջանում դիցաբանությունն, ըստ էության, ձուլվել է այդ պատկերացումներին, հանդես եկել դրանց մեջ: Հետագայում, հասարակության զարգացման ընթացքում, աստիճանաբար առաջացել է դիցաբանական ավելի բարձր աստիճանի վերացարկում, կազմավորվել են տարբեր ժողովուրդների մարդակերպ աստվածների համազգային դիցաբաններ:

Նյութական անհավասարության մեծացմանն ու դասակարգերի առաջացմանը զուգընթաց ավելի է խորացել գլխավոր և երկրորդական աստվածների տարբերությունը, ընդգծվել նրանց նվիրապետությունը: Աստվածները և կիսաստվածները, մարմնավորելով բնության որևէ տարերք, միաժամանակ ձեռք են բերել հասարակական-բարոյական նշանակություն՝ խորհրդանշելով չարի ոչնչացումը, բարին, գեղեցիկը, հերոսականը, հասարակական կարգը:

Երբ ավարտվում է գիտակցության զարգացման դիցաբանական փուլը, իրականության բացատրության մեջ առասպելը դադարում է լինել միակ միջոցը: Սկզբնականի փոխարեն (դիֆֆուզային, սինկրետիկ, դիցաբանական) ի հայտ են գալիս կրոնը, փիլիսոփայությունը, իրավունքը, արվեստը, բարոյախոսությունը, քաղաքականությունն ու գիտությունը: Դիցաբանական որոշ սյուժեներ սկիզբ են տալիս ժողովրդական էպոսին և հեքիաթին, իսկ ուրիշները որպես նյութ են ծառայում: Բայցևայնպես, առասպելը չի անհետանում: Դիցաբանական գիտակցության մեխանիզմները վերարտադրվում են նաև պատմության հետագա փուլերում, հատկապես՝ առօրյա մակարդակում: Ավելի ուշ՝ տոհմային համակարգի պայմաններում, նախկինում անդեմ հոգիներին անուն է տրվում, դրանց ամրակցվում են որոշակի գործունեության տեսակների գործառույթները և ղեկավարումը: Ձևավորվում է պոլիդեմոնիզմ, որի ներսում աստիճանաբար ձևավորվում է հոգիների աստիճանակարգություն, առանձնանում է իշխող հոգին՝ նախաձեռնությունների հովանավորը՝ ձեռք բերելով ցեղային աստծո դիմագծեր:

Նա դառնում էր միջցեղային պանթեոնի գլխավորը, որտեղ ենթակաների իրավունքով մտնում էին այլ ցեղերի աստվածները: Ծնվում է բազմաստվածություն՝ կրոնական պատկերացում մի քանի կամ բազմաթիվ աստվածների գոյության մասին: Բազմաստվածության առաջացումը կապված է տրամաբանության ընդունակությունների զարգացման, այն է՝ ընդհանրացումների, վերլուծությունների, երևույթների դասակարգման հետ: Հասնելով միատեսակ պատկերացումների մակարդակի՝ գիտակցությունը հնարավորություն է ստացել ստեղծելու հոգիների և համապատասխան աստվածների կերպարներ: Երբ ի հայտ եկավ տեսակային և տոհմային ընդհանուր պատկերացումների ստեղծման ընդունակությունը, ձևավորվեցին աստվածների կերպարներ, որոնք գործում էին բնության և հասարակության մի շարք շրջաններում: Բայց և աստծո կերպարը, որի գործունեության դաշտը տարածվում էր իրականության մի քանի ոլորտների վրա, ենթադրում էր այլ աստվածների գոյության

ճանաչում, որոնց օգնությամբ բացատրվում էին իրականության այլ շրջանները: Ըստ աշխատանքի բաժանման չափի՝ հասարակության, ժողովրդավարությունների տարբերակմանը զուգահեռ զարգացել են բազմաստվածային կառույցներ:

Ձևավորվում է սուպրեմոտեիզմ՝ շատ աստվածներին պաշտելը մեկի գլխավորությամբ, գենոթեիզմ՝ բազմաթիվ աստվածների գոյության ընդունումը, բայց մեկին պաշտելը: Որոշ ժողովուրդների մոտ սուպրեմոտեիզմը և գենոթեիզմը վերածվում էին մոնոթեիզմի՝ միակ աստծո գոյության մասին պատկերացման: Աստիճանաբար ձևավորվում էին աստվածների պատկերները, որոնք ղեկավարում էին բնության և հասարակության մի քանի սեկտորներ, և վերջապես, ձևավորվում է Աստծո կերպարը, որը վերահսկում է բնական և հասարակական բոլոր երևույթները: Մտավորի զարգացման ընթացքում աստվածների սահմանափակման արդյունքում առաջացել է պատկերացումը միակ աստծո մասին, որն էլ իր հերթին արդյունք էր մոնոթեիստական կրոնների առաջացման ու զարգացման: Դրանք են՝ հուդայականությունը, քրիստոնեությունը, իսլամը, սիքհիզմը:

Կրոնական գիտակցության յուրահատկությունը փոխկապակցվածությունը, շաղկապվածությունը և ստորադասությունն են: Բնորոշ են հավատը, զգացմունքայնությունը, երևակայությամբ ստեղծված կերպարները, ադեկվատ իրականության բովանդակության միավորումը ոչ ադեկվատի հետ, սիմվոլիզմը, այլաբանությունը, էմոցիոնալ ուժեղ հագեցվածությունը, կրոնի լեզվի միջոցով գործունեությունը:

Կրոնական գիտակցության նշան է համարվում հավատն առ գերբնականը: Հավատացյալների կարծիքով այն չի ենթարկվում նյութական աշխարհի օրենքներին, որոնք դուրս են գալիս պատճառային կախվածությունների շարքից: Գիտակցությունը զարգացման վաղ փուլերում դեռ ընդունակ չէր ձևավորելու պատկերացումներ, հետևաբար՝ տարբերել բնականը և գերբնականը: Բնականի և գերբնականի բաժանումն ուսումնասիրվել է հուդա-քրիստոնեական ավանդույթներում, բայց քրիստոնեությունում այս դիֆուսիվիտն ոչ բոլոր մտավորականներն են ընդունում: Ինչպես ցույց են տալիս հասարակական ուսումնասիրությունները՝ հաճախ չի տրվում շատ հավատացյալների առօրյա գիտակցությանը: Երբեմն հավատը նույնականացվում է կրոնականի հետ, սակայն ոչ բոլոր հավատքներն են կրոնականին հավասար, քանի որ վերջինն ապրում է մարդու հոգեբանության մեջ հատուկ ֆենոմենի շնորհիվ: Այն հայտնվում է նյութական և հոգևոր հետաքրքրությունների, գործընթացների, պահանջարկների, իրադարձությունների, գաղափարների և մոտիվների հիմքում:

Հավատն արժեքավոր վերաբերմունք է իր իսկ առարկայի հանդեպ, կազմում է զգացմունքային և կամային պահերի միաձուլում, բայց, իհարկե, զգացմունքները դրա մեջ շատ մեծ դեր են խաղում: Հավատը միավորում է գիտակցվածն ու անգիտակիցը, ռացիոնալը և ոչ ռացիոնալը, «գազաթային» և «խորքային» հոգեբանության էլեմենտները: Այն սերտ կապված է նաև տրամաբանության հետ: Հավատի հիմնավորման տարբեր միջոցներ կարող են օգտագործվել, սակայն այն լիարժեք հիմնավորված չէ և

գործնականում փորձերով չի ստուգվել: Շատ դեպքերում հավատի սուբյեկտը համարում է, որ այն ընդհանրապես ստուգում և ապացուցում չի պահանջում, քանի որ հավատը հայտնվում է հավանականության իրավիճակում, ապա մարդու գործողությունն ուղեկցվում է ռիսկով: Չնայած դրան, այն ի հայտ է գալիս որպես անհատի, խմբերի, զանգվածների ներգրավված կարևոր գործոն, նրանց ակտիվության և վճռականության դրդապատճառ: Կրոնական կառույցների շրջանակներում ձևավորվում և մշակվում են կրոնական հավատի և բովանդակության մասին ուսմունքներ: Տարբեր կրոններում այդ ուսմունքները ձեռք են բերում որոշ յուրահատկություններ: Կրոնական հավատը միավորում է զգացմունքային և կամային տարրեր, բայց, որպես կանոն, գերիշխող են զգացմունքները: Կրոնական հավատի օգնությամբ ձեռք է բերվում մարդկանց էմպիրիկ գոյության մեջ չիրականացվող անցումները՝ սահմանափակից անսահմանափակը, անգործությունից ուժ, մահվանից հետո կյանքից կյանք, անազատությունից ազատություն և այլն: «Սկզբում ապրում ես մի շրջան, երբ հավատում ես ամեն ինչի, առանց որևէ հիմքի, ապա մի կարճ ժամանակ՝ ոչ ամեն ինչի, հետո չես հավատում ոչ մի բանի, իսկ հետո ձեռք ես բերում ճշմարիտ և կատարյալ հավատ: Եվ, ըստ որում, հիմքեր ես գտնում, թե ինչու ես հավատում» [2]:

Կրոնի բովանդակությունը պայմանավորում է կրոնական գիտակցության սիմվոլիկ կողմը: Խորհրդանիշի հատկություններով օժտված են նյութական առարկաները, գործողությունը, խոսակցական տեքստը, գիտակցության որոշ պատկերները: Իրերը և գործողությունները, որոնք գտնվում են գիտակցությունից դուրս, ձեռք են բերում նշված հատկությունները միայն գիտակցության համատեղությամբ:

Առարկաները, գործողությունները, բառերը, տեքստերը ստանում են կրոնական նշանակություններ և իմաստներ: Այդ իմաստների և նշանակությունների կրողները էկվիվալենտ են՝ սիմվոլիզացվողի փոխարինողներ, որոնք կազմում են կրոնասիմվոլիկ գործակցության միջավայրի համապատասխան գիտակցությունը՝ ներառվելով ձեռում: Ցանկացած կրոնական համակարգ ունի խորհրդանիշների միահյուսում, որոնք այդ համակարգից դուրս այդպիսին չեն: Կրոնական խորհրդանիշները շատ են, բայց ավելի ընդհանուր են նրանք, որոնք ներկայացնում են համապատասխան կրոնը. խաչը քրիստոնեության խորհրդանիշն է, չակրան՝ բուդդայականությանը, կիսալուսինը՝ իսլամինը և այլն:

Կրոնական գիտակցությանը բնորոշ է նաև ավեգորիզմը: Ավեգորիան այլաբանություն է, արտահայտվելու պայմանական ձև, պատկերավոր կերպարներում վերացական հասկացությունների պայմանական արտահայտություն, որոնք ինչ-որ այլ բան են նշանակում, բառացի իմաստից տարբերվող: Առօրյա մակարդակում ավեգորիան բացահայտվում է ինքնաբուխ, իսկ հավատախրատական հայեցակարգերում մշակվել են ավեգորիկ բացահայտումների հատուկ գործողություններ: Օրինակ՝ քրիստոնեական աստվածաբանության մեջ ավեգորիկ դասավորվածությունը բնորոշ է էկզեգետիկին (հունարեն՝ բացատրություն), որը մեկնում է ավետարանական համապատաս-

խան տեքստերը: Բառացի իմաստի հետ մեկտեղ տեքստերը մեկնաբանվում են նաև այլաբանորեն:

Կրոնական գիտակցությունը գոյություն ունի, գործում և վերարտադրվում է կրոնի լեզվի միջոցով: Կրոնի լեզուն նշանային կառույց է, որի տարրերն ունեն կրոնական նշանակություն և իմաստ: Այն ներառում է նաև բնական և արհեստական լեզուների շերտեր: Բնական լեզուների շերտերը՝ տոհմային, ժողովրդական, ազգային, առաջնային են կրոնի արհեստական լեզվի նկատմամբ (խորհրդանիշներ, գործողություններ, պարեր, ժեստեր, կրոնական կերպարվեստ, քանդակագործություն և այլն): Կրոնի լեզուն, լինելով շփման միջոց, արտահայտում է կրոնական գիտակցության բովանդակությունը: Բնական լեզուն, կախված նյութականացման միջոցներից, կրոնում ի հայտ է գալիս ձայնային կամ գրավոր տեսքով: Ձայնային կամ գրավոր միավորներում առաջ են գալիս բառեր, արտահայտություններ և նախադասություններ: Բառերի միակցությունը կրոնական նշանակությունների և իմաստների հետ ստեղծում են կրոնական բառապաշար: Այս բառերը, ինչպես և բաղադրիչ անվանումներն ու նախադասությունները, կարելի է բաժանել երկու խմբի.

1. երբ անվանում են առարկաներ, անձեր, գործողություններ, ատրիբուտացված հատկություններով իրադարձություններ՝ սրբապատկեր, խաչ, սև քար, կարդինալ, ջիհադ և այլն:

2. Անվանում են գերադրացված էակներ, կյանքի ոլորտներ, ատրիբուտացված հատկություններ և կապեր՝ Սուրբ Հոգի, Դժոխք, Դրախտ, Քավարան, Ամենակարող, Ամենահաս, Հայտնություն, Բուդդան Դխարտմայի մարմնում, Կարման, Վերածնունդ և այլն:

Կրոնական գիտակցության լեզվային արտահայտություններին հատուկ է որոշակի սինտագմատիկա (իրար հետ կառուցված), որն, ըստ էության, իմաստային միավորների փոխկապակցվածություն է: Շնորհիվ լեզվի՝ կրոնական գիտակցությունը դառնում է պրակտիկ և գործող՝ ինչպես անհատի, այնպես էլ խմբակային և հասարակական զանգվածների համար: Լեզվի օգնությամբ կրոնական պատկերացումները և չափորոշիչները փոխանցվում են սերունդից սերունդ: Ջարգացած գրի հայտնվելու հետ մեկտեղ ստեղծվում են կրոնական տեքստեր՝ Վեդաներ, Ուպանիշադներ, Հին Կտակարան, Նոր Կտակարան, Ղուրան: Ձևավորվում են պաշտամունքային լեզուներ՝ սանսկրիտ, արաբերեն, ինչպես նաև պատարագային լեզուներ՝ եկեղեցակաթոլիկական, եկեղեցասլավոնական: Պատմականորեն ձևավորվում է թեոլոգիայի համոզմունքների լեզուն, մշակվում են նզովքներ, շարականներ, աղոթքներ, ժամերգության ծիսակարգեր:

Հոգեբանները գտնում են, որ մարդու հարմարվելն արտաքին միջավայրին սկզբում կատարվում է մեխանիկական բնույթի գործողությունների միջոցով, որոնք հետզհետե դառնում են ավելի գիտակցված և նպատակաուղղված: Կատարվում է գործողությունների ինտերիորացում (ներհայեցողություն), այսինքն՝ կատարվելիք գործողությունների, մտավոր քննարկումների և ստուգումների գործընթացում դրանք

վեր են ածվում մտավոր օպերացիաների՝ հնարավոր դարձնելով նպատակաուղղված և իմաստավորված գործունեության ծավալումը: Այս ժամանակ է, որ արտահայտվում են կրոնական գիտակցության սաղմերը: Հաճախ գիտակցությունը նույնացվում է զգայության, մտապատկերների և մտածողության հետ, որն արտահայտվում է կրոնական պատկերացումների միջոցով: Այս դեպքում հոգեկանը դիտվում է որպես օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ պատկեր:

Թ. Շերիինգթոնն առաջիններից էր, ով առաջ քաշեց նյարդային համակարգի ամբողջական կառուցվածքի և գործունեության մասին գաղափարը՝ որպես անհատի ձևավորման մեխանիզմ. «*Կենտրոնական նյարդային համակարգը թեկուզ և կարելի է տարանջատել առանձին մեխանիզմների, ներդաշնակ և միասնական ամբողջություն է*» [3]: Նրա կարծիքով՝ դրանց ուսումնասիրության համար անհրաժեշտ է հետազոտել ռեցեպտորային (ընկալող) օրգանները, որոնցում սկսում է օրգանիզմի ռեակցիաները: Գլխուղեղը նյարդային համակարգի մաս է, տարածական ընկալման օրգանների համակարգ: Այդ ընկալիչները նպաստում են գլխուղեղի զարգացմանը: Բացի այդ, Թ. Շերիինգթոնն առաջ քաշեց այն ենթադրությունը, որ վարքագծի ընտրության կառավարման շղթան ակտիվանում է ընդհանուր առմամբ տարածական ռեցեպտորներով: Հետևաբար, հոգեբարոյական զարգացումը նույնպես անհրաժեշտ է դիտարկել ֆիզիոլոգիական զարգացման հետ կապի համատեքստում: Կրոնական գիտակցությունը նույնպես ձևավորվում է հոգեբանական և ֆիզիոլոգիական զարգացմանը զուգընթաց:

Փ. Ջոնսոնը նշում է, որ «*հավատը մարդկանց համար այնքան կարևոր է և անհրաժեշտ, ինչպես սնունդը*»... «*բոլոր մարդիկ կարիք ունեն հավատալու և անօգուտ է մտածել, որ մեզանից ինչ-որ մեկը կարող է երջանիկ լինել՝ լինելով կասկածամիտ*» [4]: Այս միտքը լրացնում է Յ. Բորնուկովը. «*Հավատը ենթադրում է վստահություն նրանում, ինչը տեսականորեն կարող է որևէ կասկածների տեղիք տալ, իսկ քանի որ հավատի չափորոշիչը գործունեության պատրաստականությունն է, ապա կարելի է ասել, որ հավատը պատրաստականություն է գործելու որևէ նպատակի համար, որի հաջող ավարտը նախապես երաշխավորված չէ: Հավատը մարդու մեջ ծնվում է այն դեպքում, երբ նա հետաքրքրված է հավատի առարկայով, որը նրա մեջ առաջացնում է հուզական և գնահատման ակտիվ գործառույթ: Եթե որևէ գաղափար, վարկած, կերպար նրա մոտ չի առաջացնում ակտիվ հետաքրքրություն, ապա հավատի ֆենոմենը բացակայում է: Իր այս բնույթով հավատը տարբերվում է գիտելիքից: Գիտելիքն օբյեկտիվ է, այն մտքին հասանելի է: Իսկ հավատում են նրան, ինչը մոտ է ոչ միայն մտքին, այլև սրտին, որն առաջացնում է անհատական ակտիվ գործունեություն*» [5]: Հասարակության հոգևոր մակարդակի ուսումնասիրությունները հատկապես կարևորվում են կրոնական գիտակցության գնահատման հարցում: Առանց գիտական ուսումնասիրությունների չի կարելի ճիշտ կազմակերպել դաստիարակության գործընթացը: Հոգևոր դաստիարակության կրոնական բաղադրիչի խնդիրն է անձի մեջ ձևավորել բարձրագույն մակարդակի հավատ, որը կնպաստի

միջանձնային և հասարակական հարաբերություններում բարոյական արժեքներին համապատասխան վարքագծի ընդօրինակմանն ու դրսևորմանը:

Վ. Զենկովսկին գտնում է, որ «Աստծո ճանաչողությունն» ընդհանրապես «հոգու ստեղծագործություն» չէ: Ըստ նրա՝ այն առաջնային տեղեկություն է և նրա անքակտելի ձեռքբերումը, որը կապված է հավատի ֆենոմենոլոգիայի և հոգու բնության հետ [6]: Իսկ Ֆ. Շիլլերը նկատել է, որ «*իսկական և առաջնային իրականությունը մենք տեսնում ենք ոչ թե արտաքինապես, այլ ապրում ենք՝ ունենալով մեր ներսում և ԵՍ-ի կեցության մեջ, բայց քանի որ սահմանափակ ենք գիտակցում ԵՍ-ը, հասկանում ենք նաև, որ այն իր արմատներով ամրանում է բացարձակ անանցանելի և ամենընդգրկիչ իրականության մեջ*» [7]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Дмитриева Н. Ю.**, Общая психология, Москва, 2008, с. 27.
- [2] **Бёрне К.**, Свобода и рабство, Берлин, с. 75.
- [3] **Шеррингтон Ч.**, Интегративная деятельность нервной системы, 1969, с. 52.
- [4] **Johnson P.**, Psychology of Religion, Nashville, 2014, p. 155.
- [5] **Борунков Ю. Ф.**, Структура религиозного сознания, Москва, 1971, с. 37.
- [6] **Зеньковский В. В.**, Основы христианской философии, Москва, 1960, с. 44.
- [7] **Шиллер Ф.**, Жизнь и творчество, Москва, 1955 с. 254.

Արրահամայան Կարիներ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բանալի բառեր՝ գիտակցություն, դիցաբանություն, բազմաստվածություն, հավատ, սիմվոլիզմ, այլաբանություն, կրոնական «լեզու»:

Հոդվածում ներկայացրել ենք մարդկության կրոնական գիտակցության զարգացման ընթացքում ձևավորված զգայական, ինտելեկտուալ, կամային և հուզական գործընթացների համակարգը, որոնք ուղղված են մարդու կողմից տրանսցենդենտի ճանաչմանը և վերափոխմանը՝ համաձայն իր պահանջների:

Նպատակն է ցույց տալ հոգևոր կյանքի բոլոր շրջաններում կառուցողական հանդես եկող գիտակցության համապատասխան տեսակը և կրոնական գիտակցության յուրահատկությունը՝ հավատի, սիմվոլիզմի, այլաբանության, կրոնական «լեզվի» միջոցով:

Абраамян Карине

РАЗВИТИЕ РЕЛИГИОЗНОГО СОЗНАНИЯ

Ключевые слова: сознание, мифология, политеизм, вера, символизм, аллегория, религиозный «язык».

В статье мы представили систему чувственных, интеллектуальных, волевых и эмоциональных процессов, сформированных во время развития религиозного сознания человечества, направленную на признание и трансформацию человеческой трансцендентности в соответствии с её требованиями.

Цель статьи - показать соответствующую форму сознательного поведения во всех областях духовной жизни, а также особенности религиозного сознания через веру, символизм, аллегории и религиозный «язык».

Abrahamyan Karine

DEVELOPMENT OF RELIGIOUS CONSCIOUSNESS

Key words: consciousness, mythology, polytheism, faith, symbolism, allegory, religious 'language'.

In the article, we have presented the system of sensual, intellectual, will and emotional processes formed during the development of the religious consciousness of humanity aimed at the recognition and transformation of human transcendence in accordance with its requirements.

The goal of the article is to show the appropriate form of conscious behaviour in all the spheres of spiritual life, as well as the peculiarity of religious consciousness through faith, symbolism, allegories and religious 'language'.